



ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴԵՂԱԶԱՓԵՐ ԹՈՒԼԱՑԱԾ ԻՄՈՒՆԱՅԻՆ ՉԱՄԱԿԱՐԳԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՉԱՄԱՐ (Իմունային անբավարարություն)

Թուլացած իմունային համակարգեր ունեցող մարդիկ ավելի մեծ հավանականություն ունեն
COVID-19-ով վարակվելու, քան նորմալ իմունային համակարգեր ունեցող մարդիկ: Եվ, եթե նրանք վարակվեն, ապա
ավելի մեծ հավանականություն ունեն ծանր հիվանդանալու և վիրուսն իրենց ընտանիքի մյուս անդամներին
փոխանցելու:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իմունային անբավարարություն ունեցող որոշ մարդկանց իմունային
համակարգը չի ստեղծում բավարար պաշտպանություն Pfizer կամ Moderna պատվաստանյութերի 2 դեղաչափերը
ստանալուց հետո:

**Այդ պատճառով, CDC-ն խորհուրդ է տալիս, որ միջին կամ խիստ իմունային անբավարարություն ունեցող
մարդիկ ստանան լրացուցիչ դեղաչափ: Սա ներառում է անձանց, որոնք.**

- Ստացել են քիմիաթերապիայով ակտիվ բուժում ուռուցքների կամ արյան քաղցկեղի դեմ
- Ստացել են օրգանների փոխպատվաստում կամ ընդունում են իմունային համակարգը ճնշող դեղորայք,
- Ստացել են ցողունային բջիջների փոխպատվաստում վերջին 2 տարիների ընթացքում կամ ընդունում են իմունային համակարգը ճնշող դեղորայք
- Ունեն միջին մակարդակի կամ ծանր առաջնային իմունային անբավարարություն (ինչպիսիք են ԴիՋորջի կամ Վիսկոտ-Օլդրիջի համախտանիշները)
- Ունեն զարգացած կամ չբուժված ՄԻՎՎ վարակ
- Ստանում են ակտիվ բուժում բարձր չափաբաժնով կորտիկոստերոիդներով կամ այլ դեղամիջոցներով, որոնք կարող են ճնշել իմունային համակարգի արձագանքը:



Խոսք ձեր բժշկի հետ COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ ստանալու մասին: Եթե ձեզ անհրաժեշտ է
3-րդ դեղաչափ, ճշտեք պատվաստման լավագույն ժամանակը՝ հիմնվելով ձեր ընթացիկ բուժման ծրագրի վրա: Սա
հատկապես կարևոր է, եթե դուք պատրաստվում եք սկսել կամ վերսկսել իմունային համակարգը ճնշող բուժումը:

Դուք պետք է իմանաք նաև՝



- mRNA պատվաստանյութի (Pfizer և Moderna) 3-րդ դեղաչափը պետք է ներարկվի 2-րդ դեղաչափից առնվազն 28 օր անց:
- Հնարավորության դեպքում պետք է ներարկվի նույն պատվաստանյութը: Օրինակ, եթե դուք պատվաստվել եք Pfizer պատվաստանյութով, փորձեք 3-րդ դեղաչափը ստանալ Pfizer պատվաստանյութ:
- Ներկայումս լրացուցիչ դեղաչափի խորհուրդ չի տրվում նրանց, որոնք պատվաստվել են Johnson & Johnson պատվաստանյութով: FDA-ն դեռ գնահատում է այդ պատվաստանյութի արդյունավետության վերաբերյալ տվյալները իմունային անբավարարություն ունեցող մարդկանց մոտ: